ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վաղարշատ համայնքի ավագանու «Վաղարշապատ համայնքի 2024 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի որոշումը կատարելու, Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է իրականացնել հետևյալ փոփոխությունը.

1. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի N 1169-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2323-Ն որոշման N 9.1 հավելվածը և ՀՀ Արմավիրի մարզպետի 19.04.2024թ թիվ ՄՈ/183- Ա որոշումը.

1.1. Նվազեցնել վարչական բյուջեի եկամուտների «Տեղական վճարներ» 1351 տողը 11000.0 հազ. դրամ:

1.2. Ավելացնել վարչական բյուջեի եկամուտների «Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ» 1352 տողը 11000.0 հազ. դրամ:

1.3. Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Վաղարշապատ համայնքի ավագանու 2024 թվականի վերը նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

2. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 23-ի թիվ 1181-Ն որոշումը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 2-ի թիվ 269 որոշմամբ և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հունիսի 6-ի թիվ 843-Ա/2 և 2024 թվականի հուլիսի 2-ի թիվ 1172- Ա/2 հրամաններով ինչպես նաև հիմք ընդունելով՝ 16 ապրիլի 2024թ. կնքված պետության կողմից նպաստի ձևով արտադպրոցական ծրագրեր իրականացնող կամավոր ատեստավորված մանկավարժական աշխատողներին լրավճարների տրամադրման մասին N1 պայմանագրը և 09 հոկտեմբերի 2024թ. կնքված N1 համաձայնագիրը.

2.1. Ավելացնել վարչական բյուջեի եկամուտների 1393 տողը 4893.3 հազ. դրամ և բաշխել արտադպրոցական դաստիարակության /բաժին 09, խումբ 5, դաս 1/ <Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին> հոդվածին /հոդ. 4511/:

2.2. Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Վաղարշապատի համայնքի ավագանու 2024 թվականի վերը նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

3. Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածով.

3.1. Համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի միջոցներից կատարել հատկացում համայնքի ֆոնդային բյուջե 126952.2 հազ. դրամ:

3.2. Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսերը ավելացնել 126952.2 հազ. դրամ և բաշխել.

3.2.1. Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարման /բաժին 01, խումբ 1, դաս 1/ <Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում> հոդվածին /հոդ. 5113/ 90000.0 հազ. դրամ:

3.2.2. Ճանապարհային տրանսպորտի /բաժին 04, խումբ 5, դաս 1/ <Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում> հոդվածին /հոդ. 5113/ 16952.2 հազ. դրամ:

3.2.3. Համայնքային զարգացման /բաժին 06, խումբ 2, դաս 1/ <Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում> հոդվածին /հոդ. 5113/ 20000.0 հազ. դրամ

3.3. Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Վաղարշապատի համայնքի ավագանու 2024 թվականի վերը նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները: